

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Մարինե Հարությունյան

ՈՒՇԱԳՐԱԿ ԷԶԵՐ ԱՐՑԱՆԻ ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1639-1700 թթ.)

Բանալի բառեր - Կովկաս, Ավետարանոց, Ջրաբերդ, գորգագործություն, ասեղնագործություն, Վիշապագորգ, Օծագորգ, Արծվագորգ Փուշ, Սահք, Ցանցկեն:

Սույն ժամանակաշրջանի և ընդհանրապես պատմական տարբեր փուլերի հայկական գորգագործության, կարպետագործության, ասեղնագործության ուսումնասիրությունը կարևորվում է նրանով, որ հայկական մշակութային ինքնության այդ արժեքների ներկայացումը (իրավական և պատմական առումով) կարևոր փաստ է՝ հերքելու թուրք¹, պարսիկ և այլ երկրների ուսումնասիրողների այն տեսակետները, որ հայ ժողովուրդը երբևիցե գորգ չի հյուսել, և այդ արվեստը Կովկաս ու Փոքր Ասիա են բերել թուրքալեզու ժողովուրդները:

Վաղ ժամանակներից ի վեր հայ ժողովրդի մշակույթի արժեքների համակարգում իր ինքնատիպությամբ աչքի է ընկնում Արցախի դեկորատիվ-կիրառական արվեստը՝ իր բազմաբնույթ ճյուղերով: Արցախի դեկորատիվ-կիրառական արվեստի ճյուղերից առանձնահատուկ կարևորություն ունեն գորգագործությունն ու ասեղնագործությունը, որոնց միջոցով ժողովուրդը դարեր ի վեր որպես ստեղծագործող զանազան պատկերների միջոցով արտահայտել է իր հոգևոր աշխարհի առանձնահատկությունները:

Գորգագործություն: Արցախ աշխարհում գորգագործությունը² որպես արհեստ ձևավորվել է դեռևս վաղ անցյալում: Ուշագրավ է Վ. Թաթևյանի հիշատակումը, որ դեռևս Վանի թագավորության շրջանում արդեն նկատելի էր կիրառական արվեստի այդ ձևը: Այսինքն այն ժամանակ, երբ Ուրտեխեն կամ Ուղեխեն (Արցախի

¹Ավելին, ժխտելով այդ ուսումնասիրողների տեսակետները, ընդգծենք, որ հայկական գորգագործության մեջ բազմաթիվ բառեր փոխ են առել թուրքերը: Տե՛ս Հ. Գալայան, Գորգագործության մեջ կիրառվող հայերեն փոխառյալ բառեր թուրքերենում, «Լրաբեր հասարակ. Գիտությունների», 1977, թ. 8:

²Հարկ է նշել, որ «գորգ» տերմինի գործածության հարցի շուրջ կան վիճահարույց կարծիքներ: Ըստ Թեմուրճյանի՝ այն առաջին անգամ հայ գրականության մեջ գործածվել է 13-րդ դարում: Մինչ այդ վաղ միջնադարյան մատենագիրներ՝ Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Հովհաննես Դրասխանակերտցու և ուրիշների կողմից օգտագործվել է «անկուածոց», «արկանելի», «ակումբ», «խալի», «կապետ կամ կարպետ» և այլ տերմիններ: Մանրամասն տե՛ս Վ. Թեմուրճյան, Գորգագործությունը Հայաստանում, Եր., 1955, էջ 34-35: Բանասիրության մեջ ընդունված է այն տեսակետը, թե «գորգ» բառը առաջին անգամ հիշատակել է Հովհաննես Երզնկացին 1270-ական թվականներին իր աշխատության («Համառոտ տեսության քերականի») մեջ: Տե՛ս ՍՍ, ձեռ 2326: Գր. Ղափանցյանի կողմից գործածված «գուրգ» (kurk) արմատը ըստ Ե. Սողոտիվենտի՝ խեթերեն բառարանում նշանակում է ծածկոց (ջորիի, ծիու): Ղա էլ նշանակում է, որ այդ բառը հնարավոր է գործածված լինել ավելի վաղ ժամանակներում: Տե՛ս Վ. Թեմուրճյան, Պատմական ակնարկ հայկական գորգագործության մասին, «Տեղեկագիր» Գիտությունների ակադեմիայի, թ. 11, 1952, էջ 110:

ուրարտական անվանումը¹⁾ մտավ Բիայնա պետության կազմի մեջ²⁾: Սակայն գորգագործության, ինչպես նաև արվեստի և արհեստի այլ ճյուղերի զարգացման միտումները նկատելի դարձան Առանշահիկների օրոք³⁾: Այս փաստով ժխտվում է թուրք արվեստագետ Շերարե էդկինի այն տեսակետը, որ Կովկասում գորգերը սկսել են գործել XIV դարից հետո⁴⁾:

Արցախի գորգագործության և ասեղնագործության ուսումնասիրության արժեքային համակարգում միշտ էլ առկա են եղել մի շարք բարդ հիմնախնդիրներ: Նախ և առաջ դրանք բացատրվում են նրանով, որ տարբեր պատմական դարաշրջաններում օտար նվաճողների ավերիչ արշավանքների հետևանքով հայկական մշակույթի բազմաթիվ արժեքներ ենթարկվել են տեղաշարժերի ու փոխազդեցությունների, տեղայնացվել են այլ էթնիկական միջավայրերում, ստացել գործածական նոր ուղորտներ: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի տարածքները (նաև՝ Արցախը) գտնվելով Պարսկաստանի տիրապետության տակ⁵⁾ կրել են տեղի կիրառական արվեստի գաղափարախոսական ազդեցությունը, երբեմն՝ նշանակալից հետք թողել պարսկական արվեստում: Չնայած այդ ամենին՝ նշենք, որ Արցախի գորգագործությունն ու ասեղնագործությունը հայկական կիրառական արվեստի մյուս բազմաբովանդակ ճյուղերի հետ միասին պահպանել են իրենց ինքնատիպությունն ու ազգային նկարագիրը: Ավելին, հայ արհեստագործ վարպետների ստեղծած գորգագործության, կարպետագործության, ասեղնագործության բազմաթիվ հոյակապ նմուշներ զարդարել են Պարսկաստանի տարբեր շուկաները: 17-րդ դարի սկզբին, երբ շահ Աբասը Արարատյան⁶⁾ դաշտի բնակիչներին բռնի տեղափոխեց Պարսկաստան և բնակեցրեց Սպահան քաղաքում և նրա շրջակայքում, հայերն իրենց գույքի հետ միասին տարան գորգեր ու կարպետներ⁷⁾: Հայ վաճառականները դրանով նոր թափ հաղորդեցին տեղի միջավայրի կիրառական արվեստի այդ ճյուղերի զարգացման գործընթացին:

¹Տե՛ս Ե. П. П. Пиотровский, Ванское царство, М., 1954: Նաև՝ Յ. Կարազեղեան, Սեպագիր տեղանունները Այրարատում և հարակից նահանգներում, Եր., 1998:

²Տե՛ս Վ. Թաթևյան, Արցախի տոհմագրգերը, Եր., 2004, էջ 10:

³Տե՛ս Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմություն, Եր., 1994, էջ 28-35: Վ. Բալայան, Արցախի պատմություն, 2002, էջ 81-85:

⁴Տե՛ս Ա. Պողոսյան, Հայաստանում գորգագործության հարցի շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես», թ. 2, 2001, էջ 237:

⁵XVI դարի սկզբներից մինչև XVII-րդ դարի 30-ական թվականների վերջերը Հայաստանը ռազմական թատերաբեմ էր Առաջավոր Ասիայում քաղաքական առաջնության ձգտող Սեֆյան Իրանի և Օսմանյան Թուրքիայի միջև: Թուրք-պարսկական բախումները ավարտվեցին 1639թ. Կասրի Շիրինի (Կասրե-Շիրին) հաշտության պայմանագրով: Հայաստանը կրկին երկատվեց. Պարսկաստանին անցան Հայաստանի արևելյան նահանգները՝ Գուգարքը, Շիրակը, Արշարունիքի մի մասը, Արարատյան դաշտը, Սյունիքն ու Արցախը, Վասպուրականի արևելյան հատվածը: Իսկ Օսմանյան Թուրքիային՝ Հայաստանի արևմտյան տարածքները: Արցախը այդ շրջանում ընդգրկված էր Գանձակի բեկլարբեկության կազմի մեջ: Այս պայմանագրի կնքումից հետո, ի տարբերություն Արևմտյան Հայաստանի, Արևելյան Հայաստանում առաջացան որոշ սոցիալ-տնտեսական, քաղաքական գործոններ, որոնք էլ խթան հանդիսացան հայկական մշակութային արժեքների առաջընթացի համար:

⁶Տե՛ս Ա. Դավրիժեցի, «Գիրք պատմութեանց», Ամստերդամ, 1669, էջ 37-45:

⁷Տե՛ս Ա. Դավթյան, Հայկական կարպետ, Եր., 1975, էջ 14:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում հայկական գորգերի առանձնահատկությունների մասին ուշագրավ նշումներ է արել Ջաքարիա Ագուլեցին¹:

1639-1700 թթ. Արցախի գորգերից հայտնի էին «Վիշապագորգերը»², «Խաչենի արծվագորգերը», «Անցումային գորգերը», «Օձագորգերը», «Գուհար» (նաև՝ «Գոհար») գորգի տեսակները: Այդ շրջանում գորգագործության հայտնի կենտրոններ էին համարվում Վարանդայի մելիքության իշխանանիստ Ավետարանոց³, Ջրաբերդ⁴, Շոշի (հետագայում՝ Շուշի) ամրոցը և այլ բնակավայրեր: Դրանց վառ վկաներ են համարվում՝ աշխարհի տարբեր երկրների թանգարաններում պահվող հայկական գորգերի տարատեսակ նմուշները: 1639-1700 թվականների (նաև՝ մինչև 17-18 դարերի նմուշներ) հայկական դասական գորգերի ու կարպետների բարձրարժեք նմուշները, որ պահպանվում են աշխարհի տարբեր երկրների թանգարաններում (նաև՝ մասնավոր հավաքածուներում)⁵, իրենց ինքնատիպությամբ առանձնանում են Վիեննայի (Ավստրիայի արդյունաբերության և արվեստի թանգարան), Ամստերդամի (Համալսարանի թանգարան), Բեռլինի (Ֆրիդրիխ-կայզեր թանգարան), Բուդապեշտի (Դեկորատիվ-կիռարական արվեստի թանգարան), Լոնդոնի («Ալբերտ և Վիկտորիա» թանգարան), Նյու Յորքի («Մետրոպոլիտեն» թանգարան), Սանկտ Պետերբուրգի (Էրմիտաժ), Ստամբուլի (Թուրքական և իսլամական արվեստների թանգարան) և այլն⁶: Յուրահատուկ գործվածքներով հայկական գորգեր պահվում են նաև Հայաստանի և ԼՂ⁷ հանրապետությունների տարբեր վայրերի թանգարաններում: Այդ ժամանակի Արցախի գորգերի դասական նմուշներ ցուցադրված են Հայաստանի պատմության թանգարանում⁸, որոնք պահվում են համար 4 ֆոնդում⁹:

Ընդգծենք, որ «Վիշապագորգեր»-ի գործածման հարցի շուրջ ի հայտ են եկել տարբեր տեսակետներ. Ֆ. Մարտինը դրանք թվագրում է 13-րդ դարով, Կ. Գոմբոշը՝ 14-15-րդ դարերով, իսկ Է. Կուինելը, Կ. Էրդման, Գ. Էլիսը և ուրիշներ՝ 16-18¹⁰: Գրականության մեջ տիրապետում է այն տեսակետը, որ 17-րդ դարի սկզբներից սկսած՝ դասական վիշապագորգեր (այսինքն՝ վիշապագորգերի հնագույն ձևը) այլևս չեն գործվում, նրանց հորինվածքը վերածնվում է: Երևան են գալիս, այսպես կոչված, «Անցումային» գորգեր, որոնք էլ, իրենց հերթին, հիմք են հանդիսանում «Արծվագոր-

¹ Մանրամասն տե՛ս *Ջաքարիա Ագուլեցի, Օրագրություն*, Երևան, 1938:

² Տե՛ս XVII-XXդդ. /ալբոմ կատալոգ/, Երևան, 2012: Հայերեն արձանագրության գորգեր/ալբոմ կատալոգ/, Եր., 2010:

³ Հատկապես, երբ 17-րդ դարի վերջին 1692թ., Մելիք Շահնազարի որդի Մելիք Հուսեյնը և նրա եղբոր՝ Մելիք Միրզա-Բեկի որդի Մելիք Բադին Գեղամա լճի եզերքից իրենց ազգակիցների մի մասի հետ գաղթում են Վարանդա գավառ և բնակություն հաստատում Ավետարանոց գյուղում: (Տե՛ս Ե. Լալայան, Վարանդա, «Ազգագրական հանդես», 1897, թ. 2, էջ 5):

⁴ Տե՛ս Մ. Կազարյան, *Армянские ковры*, Москва, 1985, էջ 88:

⁵ Տե՛ս Վ. Թեմուրճյան, *Գորգագործությունը Հայաստանում*, էջ 68:

⁶ <http://www.armeniancarpets.am/hy/page/armenian-carpets-in-european-museums>.

⁷ <http://karabakh.travel/hy/museums/47/>.

⁸ <http://www.historymuseum.am/expositions/?id=6&lang=arm>.

⁹ <http://www.historymuseum.am/collections/?id=3&lang=arm>:

¹⁰ Տե՛ս Վ. Թաթևյան, նշվ. աշխ., էջ 13:

գերի» և «Գուհար» տիպի գորգերի համար: Դրանք ներկայացվում են նաև որպես մի փուլ դասական «Վիշապագորգերի» և «Զրաբերդ», «Որոտան» («Լենքորան») տիպի գորգերի միջև: Ընդգծենք, որ և՛ ուսումնասիրվող պատմափուլում, և՛ հետագա դարերում հայկական գորգարվեստում շարունակում են մնալ դասական «Վիշապագորգերի» բազմաթիվ զարդանախշային մոտիվներ:

«Վիշապագորգ»-ի շեղացանց հորինվածքում, [բուսական ու կենդանական գարդանախշերի](#) տարբեր զուգորդումներում կարևորված է [վիշապի](#) ոճավորված կերպարը (այստեղից էլ՝ անունը)¹: Կենտրոնում երկայնակի [կենտրոնական առանցքով](#) դասավորված են բազմազան հորինվածքներով շքեղ վարդյակներ: Իրենց գեղեցկությամբ աչքի են ընկնում նաև [կենաց ծառերը](#), որոնք պատկերված են վիշապի պատկերներին զուգահեռ: Դասական վիշապագորգերի գարդանկարներում առկա է «բարի» վիշապի հորինվածքը (կան նաև «չար»-ը² խորհրդանշող վիշապներ, որոնք հիմնականում համարվում են մարերի, ավելի ուշ՝ մոնղոլների խորհրդանիշներ), որը ներդաշնակված է այլ կենդանական ու բուսական մոտիվների հետ: Արցախի «Վիշապագորգերի» մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Հարություն Քրիստյանը. «Ղարաբաղում սովորություն կար և այժմ էլ այն ընդհանրացրած է.....: Երբ վերջացնում են գորգի գործուածքը և մնում է մոտ մի արշին չգործած ավելի տեղ, խնճոյք են կազմում, հարեւաններին ու բարեկամներին կանչում գորգը կտրելու օրը: Զբեր, ամուրի, յղի կանայք այդ օրը գալիս են իրենց բախտը փորձելու, տղայ կամ աղջիկ կ'ունենան թէ ոչ և գորգի վրա դիմում են տարբեր հնարքների....»³:

17-րդ դարի դասական վիշապագորգի արժեքավոր նմուշ է պահպանվում Գլազգոյում՝ Բարելի հավաքածուում (Մեծ Բրիտանիա): Այդ նմուշի ստեղծագործական և գեղագիտական տեսքը հետևյալն է. հանգուցանախշերի մեծ մասը ամփոփում են կլորավուն վարդյակ, ցլանախշ: Վ. Թաթևյանի բնորոշմամբ կենտրոնում զբաղեցրել է կեռազարդ շեղանկյուն մի զարդանախշ, որը նախանշում է դրան ազգակից տիպերի գորգագործական մի մեծ խմբի զարգացման ընթացքը: Վիշապի պատկերը մնալով արտահայտիչ՝ մոտեցել է «Թելթող» վիշապակարպետներին⁴:

Ուշագրավ է Բեռլինի իսլամական արվեստի թանգարանում⁵ պահվող «Վիշապագորգի» հոյակապ նմուշը, որում պատկերված է վիշապների զույգը՝ խաչազարդ կենտրոնով: Վիշապները պատկերված են սլացիկ՝ հին գորգերում իրենց

¹ Հարկ է նշել, որ Վիշապի գաղափարի առաջացման և տարածման հիմնահարցի շուրջ պատմագրության մեջ առկա են տարբեր կարծիքներ: Ըստ Հ. Քրիստյանի «Վիշապի» գաղափարի արծարծում պատմական Հայաստանում նկատելի էր դեռևս մ.թ.ա. 8-րդ դարում՝ Ուրարտական պետությունում: Այդ մասին հիշատակված է նաև Ասորեստանի թագավոր Սարգոնի թողած արձանագրության մեջ (տե՛ս Հ. Քրիստեան, Վիշապը հայկական գորգերում մեջ, Կենտրոն, 1932, էջ 6):

² Մանրամասն տե՛ս Հ. Քրիստեան, նշվ. աշխ., էջ 11:

³ Նույն տեղում, էջ 22: Այս մասին տե՛ս նաև Կ. Մելիք-Շահնագարյան, Բուրդ գգելը և գորգ գործելը Ղարաբաղում, «Հանդես ամսօրյա», Կիեննա, 1928:

⁴ Տե՛ս Վ. Թաթևյան, նշվ. աշխ., էջ 98:

⁵ Նույն տեղում., էջ 99:

մարմնին փաթաթված զարդանախշերից գրեթե ազատված: Գորգի հիմնական տարածությունը զարդարված է «Արծվագորգերից» վերցված «Հուշակապարիկ» պատկերանշանով, մարդկանց ու այլ կենդանիներ պատկերող մանրանախշերով: Վերևի ու ներքևի մասերում նկատվում են առյուծի ու ցուլի պատկերներ, որոնք կարծես պայքարում են միմյանց դեմ: Ջարդագուտին գալարանախշ է՝ հարստացած «բողբոջներով», որոնք խորհրդանշում են օձերի ու թռչունների հավերժական հակամարտությունը: Հետագայում նման հորինվածքով բազմաթիվ գորգեր հանդիպում են Արցախում 19-20-րդ դարերի սկզբներին:

Քննարկվող ժամանակաշրջանում Արցախի գորգագործական մշակույթում իրենց ինքնատիպությամբ առանձնանում են «Արծվագորգերը», որոնք (նաև՝ «Ջրաբերդ» կամ «Չարաբերդ») ուղեկցվում են [արծիվների](#) սիմվոլիկ պատկերներով: Դրանք համարվել են Ջրաբերդի մելիքների՝ Տեր-Իսրայելյանների խորհրդանշանները: Մեկ այլ կարծիքի համաձայն, վերջիններիս խորհրդանշանը համարվել է «Խնձորեսկ» կոչված տիպը, որը հայկական գորգարվեստի ամենավաղ հորինվածքներից մեկն է: Լինելով նախ Սյունիքի տոհմիկ տերերի՝ Սյունիների, այնուհետև՝ Օրբելյանների տոհմանշանը, 17-18-րդ դարերից սկսած՝ այն սկսել էր գործածվել նաև Արցախում: Արցախյան «Արծվագորգի» դասական օրինակ պահվում է Սյունիսենի ազգագրական թանգարանում¹:

Անցումային գորգերը թվագրվում են 17-րդ և 18-րդ դարերով: Սակայն դրանց նախօրինակները հորինվել են դեռևս 13-րդ դարի սկզբներին:

Իրենց առանցքային գեղեցկությամբ աչքի են ընկնում «Օձագորգերը»: Վերջիններս ունենում են [օձի](#) պատկերներ՝ մեջտեղում [արևի](#) սկավառակի նշաններով: Դրանք գտնվում են նախշազարդ մակերեսի կենտրոնում, շրջանակների մեջ և մեծ մասամբ կենդանական կամ աշխարհի ծագման ու հավերժության գաղափարներն են արտահայտում: Ամբողջ նախշազարդը խորհրդանշում է աշխարհի ստեղծումը, իսկ ութ օձերը՝ որպես աշխարհի պաշտպանմաններ²:

Իր ինքնատիպությամբ և արտասովոր գեղեցկությամբ առանձնանում է «Գոհար» (նաև՝ Գուհար) տիպի գորգը: Այդ գորգերից ուշագրավ է 1679-1680 թվականներին (կամ՝ 1699-1700թթ.) գործված նմուշը, որը գործվել է սյունիք-արցախյան դպրոցում: Գորգը իր անվանումը ստացել է գործողի՝ հայ կնոջ Գոհարի անունից: Դրա մասին է վկայում գորգագործի կողմից գորգի վրա թողնված երկտողը. «Ես՝ Գուհարս մեղօք լի հոգովս տկար ձեռամբ իմոյ գործեցի ով կարդայ մեկ բերան ողորմի ասի»³: Այս երկտողի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ գորգը հյուսվել է տարեց կնոջ

¹ Տե՛ս М. Казарян, Армянские ковры, Москва, 1985, էջ 91:

² Նույն տեղում, 91:

³ Տե՛ս Վ. Թաթևյան, նշվ. աշխ., էջ 108:

ծեռքով, ով Աստուծուց խնդրում է իր հոգու փրկության համար, իսկ գալիք սերունդից՝ իրեն միշտ հիշել: Հետագայում այլ ձևով դրսևորվեց այս գորգի ճակատագիրը: Խնդիրը այն է, որ 20-րդ դարի սկզբին թուրքերը հափշտակել էին այդ գորգը հայկական մի եկեղեցուց և տարել Բաթում: Ենթադրվում է, որ ավելի ուշ այն տեղափոխվել է ԱՄՆ: Այս գորգը դասվում է «Անցումային» գորգերի խմբին: Գորգի զարդանկարը բուսածաղկային ոճով նմանվում է դասական «Վիշապագորգերին»: «Գոհար» գորգում կարմիր, դեղին, կանաչ, կապույտ գույներով պատկերված են Խաչանշան, բուսական նախշեր, թռչուններ:

Իրենց գեղեցկությամբ հայտնի են «Արև-Ծիլ» (նաև՝ «Արևագորգեր», գրականության մեջ՝ «Լամբա-Ղարաբաղ») կոչվող գորգերը: Վ. Թաթևյանը հավաստում է, որ 17-րդ դարի սկզբին շահ Աբաս I-ի Պարսկաստանի տարբեր վայրերում հայերին բռնի վերաբնակեցնելուց հետո այս գորգերը գործել են պարսկական կենտրոններում՝ Թավրիզում, Սպահանում և այլուր¹: Դրանից հետո պարսկական գորգարվեստի համայնապատկերում նկատվում են հայկական որոշ զարդանախշերի նախատիպեր ու ընդհանրաձևեր, հատկապես՝ Սպահանի 17-րդ դարի գորգերում: Նման գորգերից կարելի է հիշատակել «Հերաթ», «Ֆերախան» և այլն: «Արևագորգեր» եղել են Գյուլիստանի մելիքների՝ Մելիք-Բեգլարյանների տոհմական խորհրդանշանները՝ տոհմագորգեր: Հետագայում դրանք գործածվեցին Շուշիի խաների կողմից:

Ուսումնասիրվող պատմափուլի Արցախի գորգագործական մշակույթում նշանավոր են նաև Մելիք-Շահնազարյանների և Մելիք-Ավանյանների տոհմագորգերը: Վարանդայի մելիքների՝ Մելիք-Շահնազարյանների տոհմանշանը² սկսած 17-րդ դարից եղել է «Թռչնաբուն» կոչվող հորինվածքը, որն առաջացել է դասական վիշապագորգերից: Իսկ Դիզակի Մելիք-Ավանյանների (Մելիք-Եզանյաններ) տոհմանշանի հորինվածքը վերաձևած է Լոռիում իշխող տան՝ Արղությանների տոհմագորգից:

Ասեղնագործություն: Գորգարվեստի հետ սերտորեն կապված է եղել ասեղնագործությունը: Կիրառական արվեստի այս ճյուղը՝ ասեղնագործությունը, հայ ժողովրդի մշակույթի արժեքային համակարգում արմատավորված է եղել դեռևս նախնադարյան համայնական հասարակարգում³: Արցախի մի շարք հնավայրերից հայտնաբերվել են կիրառական արվեստի բազմաթիվ նմուշներ, որոնք այժմ պահպանվում են Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանում⁴: Այդ մասին են վկայում մի շարք հայտնի հնագետների, հետազոտողների՝ Շուշվա

¹ Տե՛ս Վ. Թաթևյան, նշվ. աշխ., էջ 123:

² Հարկ է նշել, որ Մելիք-Շահնազարյանների տոհմանշանը նախկինում կրկնում էր Խաղբակյան կամ Պռոշյան իշխանական տան կենդանախշ տոհմագորգի զարդանախշերի մոտիվները:

³ Տե՛ս Ս. Դավթյան, Բանբեր Մատենադարանի, Եր., 1956, թ. 3, էջ 43:

⁴ Տե՛ս Վ. Բալայան, նշվ. աշխ., էջ 45:

ռեալական ուսումնարանի ուսուցիչ գերմանացի Էմիլ Ռեսլերը, Ռուսական կայսերական հնագիտական ընկերության անդամ Ա. Իվանովսկին, Ս. Տեր Ավետիսյանը, Ի. Մեշչանինովը, Ի. Ջափարգադեն, Յա. Հումելը, Կ. Քուշնարևան և ուրիշների ուսումնասիրությունները¹:

Ասեղնագործության հոյակապ նմուշներ ստեղծվել են հատկապես զարգացած միջնադարում: Ասեղնագործությունը համարվել է հայ կնոջ հիմնական զբաղմունքներից մեկը: Կիրակոս Գանձակեցին հիացմունքով է նկարագրում դեռևս 13-րդ դարում Հաթերքի Վախտանգ իշխանի կնոջ՝ Արզուխաթունի և նրա աղջիկների հյուսած ձեռագործները: Դրանցից չորսը, որոնք աչքի են ընկնում իրենց զարդանախշային ինքնատիպությամբ, նվիրվել են Նոր Գետիկի, Հաղպատի, Մակարա և Դադի վանքերին²: Պատմիչը հիշատակում է նաև Վախտանգ Տանգիկի կնոջ՝ իշխանուհի Խորիշահի անունը, ով իր չքնաղ ձեռագործներով «զարմացուցանէր զամենայն տեսողսն ու զլսողսն»³:

Այլ կերպ է բնորոշվում 1639-1700 թթ. Արցախի ասեղնագործության նմուշների կառուցվածքային բովանդակությունը: Խնդիրը նրանում է, որ հայ ասեղնագործ վարպետները դարերի խորքից եկող զարդանախշերի հետ հորինում էին նոր զարդաձևեր՝ պարուրված բազմերանգ թելանյութերով: Նման տարատեսակ ստեղծագործությունը դառնում էր ավելի արտահայտիչ ու շքեղ: Մյուս կողմից՝ ժամանակահատվածի հայկական ասեղնագործության առանձնահատկությունը բնորոշվում է հայոց աշխարհում ընթացող սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային իրադարձություններով: Այդ շրջանում Հայաստանի արևելյան տարածքները (նաև՝ Արցախը) գտնվելով Պարսկաստանի տիրապետության տակ, որոշ առումով ենթարկվել են տվյալ երկրի գաղափարական ազդեցությանը՝ միաժամանակ պահպանելով ազգային ինքնատիպությունը: Եվ չնայած երկրամասի սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքի առաջընթացին խոչընդոտող արգելքներին՝ Արցախի ասեղնագործությունը սետորեն փոխկապակցված էր Արևելյան Հայաստանի մյուս շրջանների արվեստի ճյուղերի⁴ հետ և շարունակել է յուրովի դրսևորվել հայկական և եվրոպական կիրառական արվեստի արժեքային համակարգում:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ասեղնագործ վարպետները ինքնատիպ զարդանախշեր էին պատկերում ազգային հագուստների վրա: Արցախում տեղաբնիկներն առանձնանում էին իրենց գեղեցիկ տարազներով: Տղամարդկանց

¹Տե՛ս ԅու. Ասրյան, Հնագիտական նորոյթներ Լեռնային Ղարաբաղում, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, թ. 2, էջ 295: Բ. Ուլուբաբյաբ, Արցախի պատմություն, Եր., 1994, էջ 18: Տե՛ս նաև Ю. Асрян, Нагорный Карабах в эпоху поздней бронзы и раннего железа (II-I тыс. до н.э), Степанакерт, 1999:

² Մանրամասն տե՛ս Կ. Գանձակեցի, Պատմություն հայոց, Եր., 1961, էջ 215:

³ Նույն տեղում, էջ 216: Տե՛ս նաև И. Элларян, Памятники истории и культуры Агстевской долины, Ереван, 1987, стр. 17.

⁴ Նշենք, որ ասեղնագործությունը պատկերագրության առումով շատ նմանություններ ունի ճարտարապետական կառույցների, խաչքարերի, գերեզմանաքարերի զարդանկարների, որմնանկարչության, մանրանկարչության զարդանկարային կառուցվածքի հետ:

տարագածը «կովկասյան» էր: Կանանց տարագը՝ ինքնատիպ հայկական¹, որը բացի գեղեցիկ ձևավորումներից, կրում էր սևի, կանաչի և մուգ դեղնավունի գեղեցիկ համադրություն²: Կարելի է ասել, որ Արցախի (նաև՝ Սյունիքի³, Ագուլիսի) կանացի տարագը այնքան էլ զարդարված չէր ասեղնագործության հարուստ նախշերով: Ասեղնագործվել են միայն վարտիքի եզրերը՝ փողկապը, շապիկի կուրծքը: Ոսկեթելով, մետաքսաթելով ասեղնագործվել են նաև գլխի թագը, ճակատկապին (ճակտնոց), գլխի ծածկոցները: Գլխի հարդարանքում հիմնականում գործածվել է զուգաթել, կատարվել են հատիկաշար տեխնիկայով արծաթե կեռածն գլխազարդեր⁴: Շքեղ են ասեղնագործված (ոսկեթելով) հարուստ դասի կանանց և տղամարդկանց թավշյա մուշտակները, կանանց մետաքսե վարտիքի փողկերը: Իրենց գեղեցկությամբ աչքի են ընկնում վարագույրների, սփռոցների, սրբիչների զարդանկարները: Ոսկեթելով ասեղնագործված են նաև նորահարսի, երիտասարդ կանանց չմուշկ-ոտնամանները: Հատկապես հարուստ զարդանախշերով էին ասեղնագործված նորածին երեխանների ծածկոցները, ձեռքերի և ոտքերի բարուրակապերը:

Ուշագրավ է Ա. Մարաբյանի հիշատակումը այն մասին, որ ընդունված էր հայկական ասեղնագործության մի շարք բարձրարվեստ տեսակներ (նաև՝ գորգերի, կարպետների) կոչել այն բնակավայրերի անուններով, որտեղ դրանք ձևավորվել են (օր՝ Վան-Վասպուրականի, Կարինի, Կիլիկիայի, Շիրակի, Արարատյան դաշտի, Սյունիքի, Արցախի և այլ վայրերի)⁵: Այդ ավանդույթը կար նաև 17-րդ դարում:

Դարեր ի վեր հայկական ասեղնագործության մեջ տարածված են եղել «Պոտոք», «Ճուր», «Ծիլ», «Սյունիկներ»(նաև՝ Մուշաբաղ), «Փուշ», «Սահք», «Ցանցկեն» նախշաձևերը, կլոր, ձվաձև, մաքրքահյուս ժանյակներ և այլն⁶: Այսպես, վերոնշյալ նախշաձևերից առկա էին նաև 1639-1700 թվականների Արցախի ասեղնագործությունում:

Երբեմն գորգերի, կարպետների և ասեղնագործված գործվածքների (Արցախի, Սյունիքի և այլ հայկական շրջանների) պատկերները արտացոլվել էին հայկական և եվրոպական կերպարվեստներում:

Արցախի գորգագործական և ասեղնագործական մշակույթի առաջընթացը առավել ցայտուն դրսևորվեց հատկապես հետագա դարերում:

¹ Ընդգծենք, որ Արցախի կանանց տարագը զարդանախշային մոտիվներով և նմանվել է Սյունիքի, Նոյեմբերյանի, Իջևանի, Լոռի-Գուգարքի, Դիլիջանի, Ագուլիսի, Օրդուբադի և գանձակեցիների տարագին:

² Տե՛ս Հայկական տարագ. Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը (ուսումնասիրությունը և պլանի նկարները Առաքել Պատրիկի), Եր., 1967, էջ 16:

³ Մանրամասն տե՛ս Ս. Դավթյան, Հայկական ասեղնագործություն, Եր., 1972, էջ 27-32:

⁴ Այս մասին մանրամասն տե՛ս Ս. Պողոսյան, Ա. Ստեփանյան, Սյունիք-Արցախի ավանդական տարագախումբը հայոց տարագի համակարգում, Լեռնային Դարաբաղի հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան (Միջազգային գիտաժողով), Եր., 2007, էջ 417-424:

⁵ Տե՛ս Ա. Մարաբյան, Ասեղնագործություն, Եր., 1985, էջ 3:

⁶ Նույն տեղում:

Ընդհանրացնելով, նշենք, որ վերը բերված ամփոփ տեղեկությունները ևս մեկ անգամ ապացուցում են պատմական այն ճշմարտությունը, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում արցախահայերը շարունակել են ոչ միայն պահպանել նախորդ դարերում մեր նախնիների կողմից ստեղծված հայկական գորգագործության ու ասեղնագործության լավագույն նմուշները, այլև դրանց զուգահեռ ստեղծել նորերը: Այդ շրջանում Արցախի գորգագործական և ասեղնագործական մշակույթի առաջընթացը ընթանում էր Արևելյան Հայաստանի մյուս շրջանների դեկորատիվ-կիրառական արվեստի ճյուղերի զարգացմանը զուգահեռ:

Марине Арутюнян, Интересные страницы истории ковроделия и рукоделия Арцаха - Ковроделие и рукоделие, как ремесла, были использованы в Арцахе с древних времен. В течение столетий, создавая богатые культурные ценности, эти разделы декоративно-прикладного искусства заняли свое уникальное место в традиционных и важных сферах системы армянской культуры. Это была одна из самых любимых работ армянской женщины. Благодаря творческому уму армянских женщин и девочек, замечательные образцы ковроделия и рукоделия были созданы в Арцахе, которые были везде: в домах, церквях и других местах. Искусство ковроделия и рукоделия было очень повреждено иностранными захватчиками во время всей его истории. Некоторые из образцов декоративно-прикладного искусства с другими ценностями армянской культуры были разрушены или украдены иностранными захватчиками. Однако, культура ковроделия и рукоделия смогла сохранять свой национальный облик, многие ценные образцы из которых до настоящего времени хранятся в лучших музеях мира.

Marine Harutyunyan, Remarkable pages of history of carpet weaving and needlework of Artsakh - Carpet weaving and needlework, as a craft, have been used in Artsakh since ancient times. During centuries, creating rich cultural values, these branches of arts and crafts have taken their unique place in the traditional and important spheres of the Armenian culture. It was one of the most beloved works of the Armenian woman. Thanks to the creative mind of Armenian women and girls, remarkable examples of carpet weaving and crafts were created in Artsakh, they were everywhere: in homes, churches

and other places. Art of carpet weaving and needlework was very damaged by foreign invaders during its entire history. Some of the samples of arts and crafts with other values of Armenian culture were destroyed or stolen by foreign invaders. However, the culture of carpet weaving and needlework could preserve its national description, many valuable specimens of which hitherto are kept in the best museums the world.

Մարինե Հարությունյան- պատմ. գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի գիտաշխատող: